



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ՈՏԼՆՈՒՄՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ

**ՀԵՏԵԻՆՔ ՅԻՍՈՒՍԻ ԽՈՆԱՐՅՈՒԹԵԱՆ ՈՒ  
 ԾԱՌԱՅԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԻՆ**

*ԸՍԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ*

Աւագ Հինգշաբթին Ս. Յարութեան տօնը կանխող ամենն խորհրդալից օրերէն մէկն է եւ կ'ոգեկոչէ յիշատակը Վերջին ընթրիքին ու Յիսուսի մատնութեան: Մեր եկեղեցին այս օրը կը նշէ առաւօտեան Ս. Հաղորդութեան պատարագով, յետմիջօրեի Ոտնլուայի արարողութեամբ եւ երեկոյեան Խաւարման Կարգով:

Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի կէսօրէ ետք Ոտնլուայի արարողութիւնը կատարեց Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, իսկ երեկոյեան, նախագահեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Խաւարման կարգին:

Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, խուռներամ հաւատացելալներու ներկայութեան, Առաջնորդ Սրբազանը հանդիսաւոր արարողութեամբ մը կատարեց Ոտնլուան: Հետեւելով Վերջին Ընթրիքի պահուն իր աշակերտներուն ոտքերը լուացող մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի օրինակին, Առաջնորդ Սրբազանը լուաց մանուկներու, եկեղեցւոյ սարկաւազներուն եւ Հոգեւոր Հովիւին ոտքերը: Այս առիթով իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց բոլորին, որ հետեւին Յիսուսի օրինակին եւ առաջնորդուին նոյն արժանիքներով: «Յիսուսի օրինակով, պէտք է զիրար սիրենք, իրարու օգնենք եւ ծառայենք խոնարհութեամբ եւ անկեղծութեամբ, որպէսզի մեր անհատական ու հաւաքական կեանքները ունենան աստուածահաճոյ ընթացք եւ հետեւիք մեր Տիրոջ ճշմարիտ ճանապարհին», շեշտեց Առաջնորդ Սրբազանը:

Արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցւոյ Հովիւը՝ Արժ. Տ. Խորէն Քիւն. Պապօշեան եւ սարկաւազաց դասը:

**ԿԱՐԳ ԽԱՒԱՐՄԱՆ**

Աւելի ուշ, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ Խաւարման կարգի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Յիսուսի աշխարհ առաքելութեան հիմնական նպատակը, նշելով, որ ան մարդկութեան մեղքերը իր ուսերուն առաւ, ենթարկուեցաւ մատնութեան, ձերբակալման եւ չարչարանքի, հետեւաբար, մեզի՝ քրիստոնէաներուս կը մնայ մեր կարգին վերցնել մեր խաչը եւ հետեւիլ Աստուածորդուն:

Յայտնենք, որ մեծ թիւով հաւատացեալներ ներկայ էին Ս. Խաչ Մայր Տաճար, մասնակից դառնալով հոգեպարար արարողութեան:

Նշենք նաեւ, որ յիշեալ արարողութիւնները տեղի ունեցան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն:

**DURING THE WASHING OF THE FEET CEREMONY**

**LET US FOLLOW THE EXAMPLE OF JESUS  
OF HUMILITY AND SERVICE**

Declared the Prelate

Maundy Thursday is one of the most poignant days of Holy Week, a day when we commemorate the Last Supper and the betrayal of Jesus.

On the afternoon of Thursday, April 5<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the Washing of the Feet services at St. Sarkis Church in Pasadena, assisted at the altar by parish pastor Rev. Khoren Babochian. Later in the evening the Prelate conducted Vigil service at Holy Cross Cathedral in Montebello.

During services in Pasadena, the Prelate washed the feet of children, the parish pastor and deacons, to symbolize Jesus washing His disciples' feet at the Last Supper. He called on the parishioners to follow in the example of Jesus and to be led by His teachings on love, humility, and service. "Let us live in humility and dedicate our lives to the true path of our Savior," stressed the Prelate.

During vigil services in Montebello, the Prelate speaking on the earthly mission of Jesus Christ, stressed that Christ was subjected to betrayal, arrest, and torture for our sins, therefore we as Christians must continue to follow in His example and atone for our sins.

The same services were also conducted in all of our churches.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.